ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻ ՑԱՎԱԿՑԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐԸ ՌԴ ՆԱԽԱԳԱՀԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ

Սեպտեմբերի 14-ին Կաթողիկոսական Տեղապահ Ամենապատիվ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը ցավակցական հեռագրեր ուղարկեց ՌԴ նախագահ Բորիս Ելցինին և Մոսկվայի ու Համայն Ռուսիո Պատրիարք Ալեքսիյ Երկրորդին՝ Բույնակսկում և Մոսկվայում ահաբեկչական գործողություններին զոհ դարձած անմեղ քաղաքացիների մահվան կապակցությամբ:

Հայ Եկեղեցու և ողջ հայ ժողովրդի անունից իր ցավակցությունը հայտնելով զոհվածների ընտանիքների հարազատներին, Տեղապահ Արքազանը նշում է. «Ռուս ժողովրդին վերահաս մեծ վիշտը նաև հայ ժողովրդի և Հայ Եկեղեցու վիշտն է, քանզի զոհվածների ողբը արձագանքում է ողջ աշխարհում»: Ամենապատիվ Արքազանը դատապարտում է ցանկացած տիպի ահաբեկչությունը և հայցում, որպեսզի Ամենաբարձրյալը խաղաղություն հաստատի աշխարհում, վերափոխելով զոհվածների հոգիները երկնային թագավորություն:

ՄԱՍԼՈ ԴԻՎԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌԻ